ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
2015 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 3

ԲԱԺԻՆ 2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները 5

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 5

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները 7

ԲԱԺԻՆ 3. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները 8

3.1. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 8

3.2. Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 8

3.3. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ 9

3.4. Երևան ՀԷԿ 1-ի վերազինման աշխատանքներ 9

3.5. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ 10

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 11

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը 11

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 13

Եզրակացություններ 15

Հղումներ օգտագործված նյութերին 16

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2016 թվականի աշխատանքային ծրագրի 29-րդ կետի **[Որոշում 1]** և արտացոլում է «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2014-2018 թվականների ներդրումային ծրագրի 2015 թվականի հատվածի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2014-2018 թվականների ներդրումային ծրագիրը **[Որոշում 2, Որոշում 3]** և լիցենզավորված գործունեության վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը **[Հաշվետվություն]**:

ԲԱԺԻՆ 1.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող ՀԷԿ-երի վերականգնման և վերազինման, էլեկտրատեխնիկական սարքավորումների արդիականացման, հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինման և շենքերի, շինությունների վերակառուցման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել նաև ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների, ՀԷԿ-երի անվտանգ

աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, տնտեսական բնույթի սարքավորումների, գործիքների, համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների գույքի, հսկիչ-չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման ուղղությամբ:

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրով նախատեսված էր իրականացնել 1 860,1[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- «Հրազդան» ՀԷԿ-ի վերազինում՝ 142,5 մլն դրամ,
- «Արզնի» ՀԷԿ-ի վերազինում՝ 27,4 մլն դրամ,
- «Քանաքեռ» ՀԷԿ-ի վերազինում՝ 59,9 մլն դրամ,
- «Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերականգնում՝ 1 505,4 մլն դրամ,
- ընկերության աշխատանքների կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 125,0 մլն դրամ:

Ստորև՝ գրաֆիկ 1-ում, ներկայացված է ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ նպատակային ուղղությունների:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից ներդրումների մեծ մասը՝ 1 096,6 մլն դրամ, նախատեսվում էր ուղղել ՀԷԿ-երում էլեկտրատեխնիկական սարքավորումների

[1] Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն, բացառությամբ մարդատար մեքենաների ձեռքբերման գումարների:

վերականգնմանը և փոխարինմանը: Համաձայնեցված ներդրումների 638,5 մլն դրամը նախատեսված էր հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական և օժանդակ սարքավորումների փոխարինման, հիդրոտեխնիկական կառույցների, շենքերի և շինությունների վերականգնման նպատակով:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսվում էր ընկերության բնականոն աշխատանքների կազմակերպման նպատակով մեքենաների, մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի և այլ գույքի ձեռք բերում՝ 125,0 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 2.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի փաստացի իրականացված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2015 թվականի ընթացքում կատարել է 2 062,4 մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 940,2 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 1 122,3 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և շահագործման հանձնված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

հ/հ	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2015թ.	2015թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	142.5	142.5	100%	142.5	13.6	156.1
2	Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	27.4	27.4	100%	27.4	-	27.4
3	Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ	59.9	71.1	119%	71.1	-	71.1
4	Երևան ՀԷԿ-1-ի վերականգնում	1 505.4	638.9	42%	1 552.4	195.2	1 747.6
5	Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	125.0	58.0	46%	58.0	-	58.0
6	Ներդրումային ծրագրից դուրս աշխատանքներ	-	2.3	-	2.3	-	2.3
	Ընդամենը	**1 860.1**	**940.2**	**51%**	**1 853.7**	**208.8**	**2 062.4**

Աղյուսակ 1-ից երևում է, որ ընկերությունը ներդրումային ծրագիրը կատարել է 51%-ով: Ներկայացված ծավալներում ներառված են Ընկերության վարչական շենքի ջրագծի ցանցի նորոգման ուղղությամբ 2,3 մլն դրամի ներդրումները, որոնք համաձայնեցված չեն ներդրումային ծրագրով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	**Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ**	**208.8**	**10%**	**-**	**-**
2	**Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից**	**1 068.2**	**52%**	**838.4**	**89%**
3	**Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից**	**58.0**	**3%**	**58.0**	**6%**
4	**Սեփական ուժերով կատարված աշխատանքներից**	**727.5**	**35%**	**43.8**	**5%**
4.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	2.2		2.2	
4.2	*նյութական ծախսումներ*	1.7		1.7	
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	-		-	
4.4	*նախագծային աշխատանքներ*	605.5		3.0	
4.5	*այլ*	118.1		36.9	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**2 062.43**		**940.16**	

Աղյուսակ 2-ից երևում է, որ Ընկերության կողմից 2015 թվականին շահագործման հանձնված աշխատանքների մեծ մասն (90%-ը) իրականացվել է կապալառու կազմակերպությունների կողմից: Շահագործման են հանձնվել

ներդրումային ծրագրով համաձայնեցված աշխատանքների իրականացմանն ուղղված նախորդ տարիներին իրականացված 208,8 մլն դրամի աշխատանքներ: Նախագծային փաստաթղթերի մշակման նպատակով ընկերությունը 2015 թվականին իրականացրել է 605,5 մլն դրամ, որից ընդամենը 3,0 մլն դրամի ներդրումներն են վերաբերվում շահագործման հանձնված աշխատանքներին:

ԲԱԺԻՆ 3.
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի 2015 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից 2015 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1. Հրազդան ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Հրազդան» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 142,5 մլն դրամ՝ ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքների վերականգնման ուղղությամբ: Փաստացի իրականացվել են 156,1 մլն դրամի ներդրումներ, որից 142,5 մլն դրամի աշխատանքները հանձնվել են շահագործման:

3.2. Արզնի ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Արզնի» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2015 թվականին 118 կուտակիչ մարտկոցների ձեռքբերման նպատակով համաձայնեցված էր 27,4 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 120 մարտկոցներ՝ ընդհանուր 27,4 մլն դրամ արժեքով:

3.3. Քանաքեռ ՀԷԿ-ի վերազինման աշխատանքներ

«Քանաքեռ» ՀԷԿ-ի վերազինման ուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 60,0 մլն դրամ՝ էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման նպատակով: Մասնավորապես նախատեսվում էր փոխարինել 10 կՎ դողային կամրջակը և № 2 սեփական կարիքների տրանսֆորմատորի բջջի սարքավորումները: Նշված աշխատանքներն իրականացվել են 71,1 մլն դրամով:

3.4. Երևան ՀԷԿ 1-ի վերականգնման աշխատանքներ

«Երևան ՀԷԿ-1» ՀԷԿ-ի վերականգնման ուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 1 505,4 մլն դրամ հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումների փոխարինման և վերականգնման, էլեկտրատեխնիկական սարքավորումների փոխարինման և արդիականացման, ինչպես նաև շենքերի և շինությունների վերակառուցման ուղղությամբ:

«Հիդրոտուրբինային, հիդրոմեխանիկական, օժանդակ սարքավորումներ» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 424,6 մլն դրամ՝ ՀԷԿ-ում հիդրավլիկ տուրբինների, ճնշումային կոմպրեսորի և դրենաժային պոմպի փոխարինման նպատակով: Այս ուղղությամբ փաստացի իրականացվել են 650,2 մլն դրամի ներդրումներ, որոնք դեռևս շահագործման չեն հանձնվել:

«էլեկտրատեխնիկական սարքավորումներ» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 1 009,4 մլն դրամ՝ ՀԷԿ-ի գեներատորների գրգռման համակարգերի արդիականացման, 28 հատ 6 կՎ բջիջների փոխարինման, կամրջակային կռունկի և երկու ուժային տրանսֆորմատորների վերականգնման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 1 061,3 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել կամրջակային կռունկի և ուժային տրանսֆորմատորների վերականգնմանն ուղղված 638,9 մլն դրամի ներդրումները: Գեներատորների գրգռման համակարգերի արդիականացման և 6 կՎ բջջի սարքավորումների փոխարինման ուղղությամբ համաձայնեցված աշխատանքներն իրականացվել են 422,4 մլն դրամ արժեքով և դեռևս շահագործման չեն հանձնվել:

«Շենքեր, շինություններ» ենթաուղղությամբ 2015 թվականին կայանային հանգույցի շենք և շինությունների վերակառուցման ուղղությամբ համաձայնեցված էր 71,4 մլն դրամ: Փաստացի իրականացվել են 36,1 մլն դրամի ներդրումներ, որոնք դեռևս շահագործման չեն հանձնվել:

3.5. Այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով 2015 թվականին համաձայնեցված էր 125,0 մլն դրամ մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման, ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների, հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների, գրասենյակային կահույքի, լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների, բջջային հեռախոսների ձեռքբերման նպատակով:

«Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2015 թվականին նախատեսվում էր 89,4 մլն դրամ ընդհանուր արժեքով ձեռք բերել 8 մարդատար մեքենաներ: Փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 2 մարդատար մեքենաներ՝ 27,5 դրամ ընդհանուր արժեքով:

«ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ» 2015 թվականին համաձայնեցված էր 19,2 մլն դրամ շարժիչների, պոմպերի, ներանցիչների, ամբարձիչների, վերհան հարթակների ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 20,7 մլն դրամի սարքավորումներ:

«Տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերման ենթաուղղությամբ» 2015 թվականին փաստացի ձեռք են բերվել 1,4 մլն դրամի հիմնական միջոցներ: Տվյալ ենթաուղղությամբ համաձայնեցված էր 0,6 մլն դրամ:

«Լիցենզավորված ծրագրերով համալրված համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2015 թվականին համաձայնեցված էր 7,4 մլն դրամ համապատասխան ծրագրերով հագեցած նոր համակարգիչների և համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների

ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 6,7 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գրասենյակային կահույքի ձեռքբերում» 2015 թվականին համաձայնեցված էր 1,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 0,5 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

«Հսկիչ-չափիչ սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղությամբ» 2015 թվականին համաձայնեցված էր 7,0 մլն դրամ: Հաշվետու տարում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 0,9 մլն դրամի սարքավորումներ և գործիքներ:

«Բջջային հեռախոսների ձեռքբերում» 2015 թվականին համաձայնեցված էր 0,3 մլն դրամ 30 հատ բջջային հեռախոս ձեռքբերելու նպատակով: Հաշվետու տարում ձեռք է բերվել 0,2 մլն դրամ արժեքով 1 բջջային հեռախոս:

Բացի վերը նշվածը, Ընկերության կողմից ներկայացված հաշվետվության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ներկայացված ծավալներում ներառված է ընկերության վարչական շենքի ջրագծի ցանցի նորոգման ուղղությամբ իրականացված 2,3 մլն դրամ արժեքով աշխատանքը, որը ներդրումային ծրագրով համաձայնեցված չէր: Ուստի նշված աշխատանքը չի դիտարկվել սակագնով փոխհատուցման տեսանկյունից:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2015 թվականի ընթացքում Ընկերության կողմից փաստացի ավարտված 940,2 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված գնումների արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացվել է ընկերության կողմից ձեռքբերված ապրանքների և իրականացված աշխատանքների գնային վերլուծություն: Գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ իրականացված աշխատանքների և ապրանքների ու սարքավորումների գները որոշ դեպքերում գերազանցում են շուկայականը: Արդյունքում շուկայական գների, ինչպես նաև իրականացված հիմնանորոգման աշխատանքների ծավալների ուսումնասիրության արդյունքում էլեկտրատեխնիկական սարքավորումների հիմնանորոգման աշխատանքների ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել է 349,6 մլն դրամ: Հաշվի առնելով 2015 թվականի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները՝ ԷՑՎ 12-160-65 խորքային պոմպի ձեռքբերման պայմանագրով նախատեսված միավորի գինը գերազանցել է շուկայական արժեքը: Արդյունքում ՀԷԿ-երի անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել է 4,4 մլն դրամ: Միևնույն ժամանակ 7,5 մլն դրամ նվազեցվել է մարդատար ավտոմեքենաների և 0,2 մլն դրամ բջջային հեռախոսների ձեռքբերման գներից՝ միավորի ձեռքբերման համար համաձայնեցված միջին գինը գերազանցելու պատճառով:
2. հաշվի առնելով, որ Ընկերության սակագնի 2015 թվականի մեծության հաշվարկման ժամանակ սակագնի ծախսային հոդվածներում ներառվել է Ընկերության աշխատողների փաստացի թվաքանակով հաշվարկված միջին աշխատավարձը, ուստի ավարտված աշխատանքների մասով հաշվետվությամբ ներկայացված 2,2 մլն դրամ ծավալով կապիտալացված աշխատավարձից ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների մասով 1,9 մլն դրամ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, իսկ 0,3 մլն դրամը վերաբերում է ներդրումային ծրագրով չհամաձայնեցված աշխատանքին:

3. 2015 թվականին իրականացված՝ ավարտված աշխատանքների ուղղությամբ 2015 թվականին կապիտալացվել են 36,9 մլն դրամը ավարտված, շահագործման հանձնված աշխատանքների ուղղությամբ: Նշված տոկոսները սակագնով փոխհատուցման ենթակա չեն, քանի որ, համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի, ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումների արդյունքում շահագործման հանձնված հիմնական միջոցների մնացորդային արժեքի նկատմամբ յուրաքանչյուր տարի կկիրառվի 10 տոկոս շահույթի նորմա՝ մինչև հարկումը: Այսինքն, ներդրումների նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների սպասարկման ծախսերի սակագնով փոխհատուցման հարցն արդեն իսկ կարգավորված է վերը նշված որոշմամբ և նշված 36,9 մլն դրամը նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներից,

4. 14,5 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով,

5. իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 11,7 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից հետևյալ ենթաուղղություններով.

- № 2 սեփական կարիքների տրանսֆորմատորի բջջի սարքավորմների փոխարինում՝ 11,1 մլն դրամ,
- տնտեսական բնույթի սարքավորումների ձեռքբերում՝ 0,6 մլն դրամ:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2015 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
մլն դրամ

1	**Իրականացված ներդրումներ**	**2 062.4**
2	**Անավարտ աշխատանքներ**	**1 122.3**
3	**2015 թվականի ընթացքում շահագործման հանձնված աշխատանքներ**	**940.2**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**426.7**
4.1	Գների մոնիթորինգի արդյունքում ապրանքների և ծառայությունների արժեքներից նվազեցում	361.7
4.2	Ծախսումներ աշխատանքի վճարման գծով	1.9
4.3	Վարկի սպասարկման տոկոսներ	36.9
4.4	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	14.5
4.5	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	11.7
5	**2015 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**513.5**

Եզրակացություններ

Ամփոփելով Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2015 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 51 %-ով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 2 062,4 մլն դրամի ներդրումներ, որից 940,2 մլն դրամի ներդրումները հանձնվել են շահագործման:

Շահագործման հանձնված հիմնական միջոցներից 426,7 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 45%-ը, չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Արդյունքում 2015 թվականին շահագործման հանձնված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 513,5 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №439Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».

Որոշում 2 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 12-ի №15Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2014-2018 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Որոշում 3 - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի №447Ա որոշումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության 2015 թվականի ճշգրտված ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».

Հաշվետվություն - «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2016 թվականի փետրվարի 5-ի №2/9-005 գրությամբ ներկայացված հաշվետվությունը: